դարձաւ յաքսորանաց և Ս. Կիւրեղ և մարդասիրութեամբ ընկալաւ զնա յԱնտիոք Ս. Մելիտոս, ուր էր յայնժամ եւ թագաւորն, և յանձն արար նմա մանուկ զոմն որդի քրմի, փախուցեալ 'ի ձեռաց հօր իւրոյ և Յուլիանոսի. և Կիւրղի առեալ զայն գիշերայն եկ 'ի քաղաքէն և եկն յաթոռ իւր յԵրուսաղէմ, ուր մկրտեաց զմանուկն եւ յետ ժամանակաց դարձոյց նաեւ զհայր նորին 'ի Ս. Հաւատս։ Կարի զայրացեալ էր Յուլիանոս ընդ Աթանաս, եւ հրամայեաց հանել զնա 'ի սահմանացն Եգիպտացւոց. այլ Աթանաս զերծաւ 'ի ձեռաց խնդրակացն։ Պատրաստեցաւ Յուլիանոս տալ մեծ ինչ մարտ պատերազմի ընդ Պարսից, և եկն յԱնտիոք, կողոպտեաց զՔրիստոնեայս և զեկեղեցիս ծանրութեամբ հարկաց։ Եւ ազատութիւն Հրէից և հրամայեաց զոհս մատուցանել ըստ օրինացն Մովսիսի։ Իսկ Հրէայքն ասեն, չէ մարթ ուրեք զոհս մատուցանել, եթէ ոչ շինեսցի Տաճարն, կործանեալ 'ի Տիտոսէ. ես անդրէն 'ի տեղւոջն կանգնեցից. բուռն հարէք շինել զայն 'ի հիմանց և ես զծախսն լցից յարքունի գանձուց։ Մեծ էր կատաղութիւն Հրէից ժողովելոց յԵրուսաղէմ և լուտանք նախատանաց ընդդէմ Քրիստոնէից։ Յուսով շինելոյ զնոր Տաճար հոյակապ՝ քակեցին և զբաղումս 'ի մնացեալ քարանց հիման հնոյ Տաճարին առ արկանել զհիմն նոր. և զհողն կուտեցին 'ի բլուրս բլուրս, և պատրաստեցին զնիւթս շինուածոցն՝ զի 'ի վաղիւ անդր արկցեն զհիմն։ Եւ ահա 'ի գիշերին այնմիկ եղեւ յանկարծակի սասանութիւն ահագին զտեղեաւն, և յետ շարժմանն յարեաւ հողմ սաստիկ ուժգին փոթորկեալ. և 'ի կրկին դղրդմանց սատի կործանեցան տունք շրջակայ, յորս ժողովեալ էին բազմութիւնք Հրէից գործաւորաց, մինչեւ ճմլիլ նոցա ընդ փլատակաւ եւ կորնչիլ. և 'ի մրրկէ անտի հողակոյտն ամենայն լցաւ անդրէն 'ի փոսն փորեալ. եւ քարինք մեծամեծք պատրաստեալք վասն հիմանց ձգեցան 'ի վայրս հեռաւորս, ատաղձ շինուածոյ ցիր եւ ցան եղեն 'ի մէջ քաղաքին։ Հրէայք ոչ զգաստացան յԱստուածասաստ յանդիմանութենէ անտի. այլ 'ի վաղիւ անդր յանդգնեցան միւսանգամ յառաջին գործն. այն ինչ սկսան մաքրել զտեղի հիմանն, յեղակարծուց իմն 'ի վեր եկ հուր 'ի գետնոյ անտի